

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ Տ. ԱՐԱՐԱՏ ԵՊԻՄԿՈՂՈՍ ԳԱԼԹԱԳՃՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանորդից տեսուչ Գերաշնորհ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարպետ:

Արարատ Սրբազանը շարունակելու է կատարել նաև վանքերի տեսչի պարտականությունները:

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ԱՐԳԱՐ ՔԱՀԱՆԱ ԳՐԼՐՃՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալուծ է հռչակվել Ուկրաինայի հայոց թեմի հոգևոր սպասավոր Տ. Արգար քահանա Գրլրճյանը:

Հայրապետական վճռի կայացման համար հիմք են ծառայել Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի միջնորդագիրը Տ. Արգար քահանա Գրլրճյանին քահանայական կարգից ազատ կացուցանելու վերաբերյալ, ինչպես նաև՝ Տ. Արգար քահանա Գրլրճյանի դիմումը:

Կարգալուծ հռչակված քահանան այսուհետ կդասվի աշխարհականների շարքը և կկոչվի ավագանի անունով՝ Լևոն Գրլրճյան:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*